

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 26

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 23.02. 2018թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 29 (քսանին) անդամից 26-ը (քսանվեցը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Մինասյան Սահակ Գարուշի** — Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
3. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
4. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
5. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
6. **Տոնոյան Երվանդ Պարույրի** — Ռազմական ամբիոնի պետի տեղակալ-ուսումնական մասի պետ
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** — Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն- գրադարանի տնօրեն
8. **Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
9. **Քալաջյան Ռաֆֆի Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
10. **Սարգսյան Մամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
11. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր

12. Դրմեյան Հենրիկ Ռուբենի — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր

13. Մարդոյան Ռուզաննա Արամայիսի — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր

14. Մելիքյան Թամարա Հմայակի- Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակ.-ի դեկան, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ

15. Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զրոսաշրջության ամբիոնի ասիստենտ

16. Ղուկասյան Լուսիկ Հենրիկի— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ

17. Հակոբյան Լիզա Հելբերդի — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ

18. Մարտիրոսյան Լևոն Մովսեսի — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ

19. Արամյան Կարեն Արմենի — ՇՊՀ ՈԻԽ նախագահ, ռազմական ամբիոն «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 4-րդ կուրսի ուսանող

20. Խաչատրյան Լիլիթ Վարդանի— Մանկավարժության ֆակուլտետ, «Մանկավարժություն և մեթոդիկա», 4-րդ կուրսի ուսանողուհի

21. Ավետիսյան Հրանուշ Կարապետի — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի

22. Մխիթարյան Անահիտ Աշոտի — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Կիրառական արվեստ» 3-րդ կուրսի ուսանողուհի

23. Կոստանյան Նինա Կարապետի — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Մաթեմատիկա» 4-րդ կուրսի ուսանողուհի

24. Հարությունյան Քաջիկ Հակոբի — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 1-ին կուրսի ուսանող (մագիստրատուրա)

25. Մելքոնյան Արմեն Գրիգորի — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)

26. Չարչողյան Արթուր Էդվարդի — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի

ՕՐԱԿԱՐԳ

1. Համալսարանից ԱԻ նախարարին և քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահին ուղղված բաց նամակի հետքերով բուհում կատարված ստուգումների և եզրակացությունների արդյունքում, ԱԻՆ նամակի պահանջներից դուրս գալով՝ 2000-2002թթ.-ին շենքի I հարկի ապակեպատ չորս ելք- պատշգամբների բացելու անհրաժեշտության մասին

Հաղ՝ ռեկտոր Ս. Մինասյան

2. Էթիկայի հանձնաժողով ստեղծելու մասին

Հաղ՝ ռեկտոր Ս. Մինասյան

3. Մագիստրատուրայի և բակալավրիատի կրթական ծրագրերով սովորողների (առաջին կուրսերի) փոփոխված ուսումնական պլանների վերանայման մասին

Հաղ.՝ Ուսումնամեթոդական գործընթացի Պ կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր Ե. Մերոբյան

4. «Բարձրագույն կրթության ոլորտի օրենսդրական բարեփոխումներն ու հիմնախնդիրները» թեմայով խորհրդարանական լսումների իրազեկման մասին

Հաղ.՝ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր Ե. Մերոբյան

5. Համալսարանի ձեռնարկատիրական գործունեության ծավալման մասին (դահլիճին, հյուրատանը, ճաշարանին առնչվող գործունեություն)

Հաղ՝ ռեկտոր Ս. Մինասյան

6. ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչության գրության հիման վրա ՇՊՀ-ի ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգում 2-րդ կետի 9-րդ ենթակետի վերանայման առաջարկի մասին

Հաղ՝ ռեկտոր Ս. Մինասյան

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

7.1 Աշխարհագրական գիտությունների թեկնածու, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանի «Էկոգրոսաշրջությունը Հայաստանում» մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին

Հաղ.՝ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր Ե. Մերոբյան

**7.2 2017-2018 ուստարվա ավարտական քննություններից չատեստավորված ուսանողների՝
2018-2019 ուստարում ավարտական քննություններին մասնակցելու պայմանների մասին**

1. ԼՄԵՑԻՆ՝

Համալսարանից ԱԻ նախարարին և քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահին ուղղված բաց նամակի հետքերով բուհում կատարված ստուգումների և եզրակացությունների արդյունքում, ԱԻՆ նամակի պահանջներից դուրս գալով՝ 2000-2002թթ.-ին շենքի I հարկի ապակեպատ չորս ելք- պատշգամբների բացելու անհրաժեշտության մասին

Հաղ՝ ռեկտոր Ս. Մինասյան

Ռեկտոր Ս. Մինասյանը ներկայացրեց, որ խնդիրը վերաբերում է ԱԻ նախարարին և քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահին վարչության և քաղաքաշինության շինարարության վերահսկողության պետական տեսչության ղիտարկումներին: Բողոք է եղել, որ խախտվել է ճաշարանի և բանականության բանալի ակումբի կառուցման պարագայում անհրաժեշտ տեխնաժին ու բնական աղետների անվտանգության ապահովման կանոնները, տարհանման պլան չկա:

Ռեկտորը ներկայացրեց, որ ղիտարկում է արվել, թե ինչու են շատ հարցեր տարվում գիտական խորհուրդ և ինքը մասամբ համաձայն է սրա հետ, բայց այստեղ մի կարևոր բայց կա, որ ուզում է հրապարակավ ասել: Խնդիրը հետևյալումն է. երբ անցած տարվա սեպտեմբերի վերջին մեզ մոտ ուսումնարաններ էր կատարում նախարարության հանձնախումբը, մեր աշխատակիցների բողոքի հիման վրա հիմնավորում պահանջվեց, թե ինչու է վերակառուցվել դահլիճը, ինչու է վերակառուցվել ճաշարանը, ինչու է ջեռուցումը փոխվել, քանդվել այս պատը և այլն, և իրեց իսկ հորդորով ու պնդմամբ խորհուրդ տրվեց, որ յուրաքանչյուր նման խնդիր ի սկզբանե քննարկվի գիտական խորհրդով: Այս խնդիրը մենք ռեկտորոտով քննարկել ենք, համապատասխան որոշում ընդունել ենք և հիմա տեղափոխում ենք գիտական խորհուրդ:

Պարզաբանվեց, որ 2000-2002թթ.-ն, ըստ հիշողության են վերականգնում մարդիկ, առաջին հարկի 2 թևերի ելքերը պետք է բացվեն, մյուս 2 ելքերը, որոնք ժամանակին սխալմամբ վերակառուցվել ու լսարանի են վերածվել, նույնպես բացելու կարիք կա: Այս ամենը շինարարական լայնածավալ աշխատանքներ չեն պահանջում, մետաղական դռները պետք է հանվեն: Ռեկտորը նշեց, որ ինքը ուզում է, որ սա համարենք հիմնավորված ղիտարկում, որը կապ չունի բողոքի հետ, ինքը չի մեղադրում նախկին ղեկավարությանը, կարծում է գնացել են այս քայլին, քանի որ չեն ունեցել լսարանային պայմաններ: Այս փոփոխությունները գիտական խորհրդի որոշմամբ համարենք անխուսափելի և հնարավորինս նվազագույն ծախսերով նախահաշիվ նախատեսենք՝ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Մարտիրոսյանը, այս վերափոխումների ժամանակ ես ներկա եմ եղել, պարզապես նեղ բալկոններ էին թողած, մի քիչ բերվել են ներս, որ մակերեսը ավելանա:

Միջնապատը տեղաշարժվել է, որպեսզի լսարան օգտագործվի:

Ռեկտոր՝ Ես խոսել եմ ստուգումներն իրականացնողների հետ, իրենք մասնագիտորեն հիմնավորել են, պահանջը արդարացված, չնայած ես խնդրել եմ նորից գան քննարկման, քանի որ մենք ելքեր շատ ունենք, իսկ լսարանային ֆոնդը այսքան չենք կարող վտանգել:

Եթե մենք այս տարի արվեստի և ռազմական ամբիոնները չտեղափոխեինք մյուս մասնաշենքերը, ավելի վատ վիճակում կլինեյինք լսարանների պակասի պատճառով:

Կարող ենք հաղորդումը համարել հիմք, և քվեարկել:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ք. Հարությունյանը հարցադրեց, թե արդյոք շենքի մուտքի մոտ տեղադրված տուրնիկետը համապատասխան է անվտանգության կանոններին:

Ռեկտորը նշեց որ այսօր ավելի առաջադեմ տուրնիկետներ կան՝ առանց երկաթյա ամրակների, և ինքը հակված է հինը փոխելու, որը այժմ ֆինանսական խնդրի հետ է կապված, սակայն լուծելի է և մտադրություն կա այն համալսարանի շենքի պարսպի մոտ տեղափոխել: Ռեկտորը նշեց նաև հակահրդեհային անվտանգության ասպեկտների մասին, հիմնավորելով, որ համալսարանի շենքը շատ ամուր շենք է, մետաղական կարկասով:

2. ԼՄԵՑԻՆ՝

Էթիկայի հանձնաժողով ստեղծելու մասին

Հաղ՝ ռեկտոր Ս. Մինասյան

Ռեկտոր Ս. Մինասյանը ներկայացրեց, որ նախորդ գիտական խորհրդով չնայած իր կողմից հնչեցրած այն խնդրին, որ մենք էթիկայի կանոնագիր չունենք, բայց սկզբունքներ ունենք մշակած, հարցը քննարկենք, թե ոչ էթիկայով, խնդիրը մնաց առկախ, բայց որպեսզի չշեղվենք մեր ընդունած որոշումներից, խնդիրը նաև քննարկենք ըստ էթիկայի սկզբունքների, կազմենք էթիկայի հանձնաժողով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ա. Մկրտչյանի կարծիքով քանի որ էթիկայի հանձնաժողովը գործիքակազմ չունի, ուստի ինչ որ քննարկվելու է, ցանկալի է, որ բաց քննարկում տեղի ունենա և ընդլայնված նիստում բոլորը իրենց կարծիքը արտահայտեն:

Բ. Պողոսյանը գտնում է, որ էթիկայի հանձնաժողով չստեղծած, ինչ հարցի քննարկման մասին է խոսքը:

Ռեկտոր Ս. Մինասյանը պարզաբանեց, որ ըստ ՀՀ օրենսդրության, էթիկայի հանձնաժողովը ստեղծվում է առանձին դեպքերի համար և ստեղծվում է ժամանակավոր: Մենք անցած գիտխորհրդի ժամանակ արդեն պարզաբանել ենք, թե ինչու ենք այս հարցը քննարկում:

Ա. Սարգսյանի կարծիքով նախորդ գիտական խորհրդում մենք արդեն որոշում ենք կայացրել, որ եթե բուհի երկու աշխատակիցների կողմից նորից վարկաբեկիչ

հրապարակումներ լինեն բուհի հասցեին, անկախ էթիկայի կանոնագրքի ներդրումից, պետք է որոշում կայացվի և խնդրին լուծում տրվի:

Ըստ պարոն Պողոսյանի, սա լրիվ ուրիշ հարց է և կապ չունի օրակարգի հարցի հետ:

Պարոն Մինասյանը նշեց, որ ուղիղ օրակարգի հետ առնչվող հարց է, քանի որ անցած գիտական խորհրդում էթիկայի սկզբունքների կիրառման հարցը բարձրացրել է տիկին Ֆարմանյանը, որը ափսոս`ս հարգելի պատճառով այսօր գիտխորհրդին չի մասնակցում:

Պարոն Մինասյանը նշեց, որ անցած գիտխորհրդի ընդունած որոշումը, որին բոլորը կողմ են քվեարկել, ինքը չի կատարել, չնայած հրապարակումները շարունակվել են:

Պարոն Պողոսյանը նշեց, որ ինքը դեմ չէ էթիկայի հանձնաժողովի ստեղծմանը, սակայն պարոն Մկրտչյանի առաջ քաշած հարցը օրակարգում չկա

Ռեկտոր Ս. Մինասյանը պարզաբանեց, որ եթե մարդիկ խոսք ունեն ասելու, որն էլ կապված է հենց օրակարգի հարցի հետ:

Լ. Մարտիրոսյանի կարծիքով 5 ամիս այս ամենը շարունակվում է և այդ ընթացքում գիտական խորհրդի նիստեր ենք անում, կարծես ոչինչ չի կատարվում մեր բուհում և քանի որ այսօր ընդլայնված նիստ է, լավ կլինի մինչև վերջ քննարկենք:

Պարոն Պողոսյանը ընդիմացավ, որ մենք անընդհատ գիտխորհուրդներում ու ռեկտորատներում պիտի քննարկենք Համբարյանի գրածները:

Ռեկտոր Ս. Մինասյանը հարց ուղղեց պարոն Պողոսյանին,- Իսկ ձեզ այս իրավիճակը դո՞ւր է գալիս :

Պարոն Պողոսյանը պատասխանեց, որ այս իրավիճակը իրեն եթե դուր չի դուր գար, չէր խոսի:

Պարոն Մինասյանը նորից հարց ուղղեց պարոն Պողոսյանին, - եթե դուք իմ փոխարեն լինեյիք, ի՞նչ պետք է անեիք, բանախոսելու բոլոր պաշարները սպառվել են, և ինքը բանախոսում է արդեն հինգ ամիս, այս խայտառակությունը ինչքան թողնենք շարունակվի:

Պարոն Պողոսյանը նորից հակադարձեց, թե մեր քննարկելու արդյունքը ի՞նչ է լինելու:

Ռեկտորը պատասխանեց, որ կքննարկենք, ըստ այդմ էլ կորոշենք:

Պարոն Մինասյանը ներկայացրեց, որ իրեն ասում են այն մասին, թե միայն երկուսը չէ, որ դժգոհ են, էլի մարդիկ կան և ինքն ուզում է հիմա ասեն, ամեն ինչ ազնվորեն և բաց տեքստով, եղե՞լ է հարց բարձացվի ու ինքը քննարկման չգնա, ուզում է բաց

խոսել՝ նշելով, որ ինքը կարող էր իր որոշումը կայացնել և սա օրակարգային հարց չդնել, բայց ուզում է լսել բոլորի կարծիքը:

Վ. Խաչատրյանը նշեց, որ ինքը պետք է խնդրի, որ այստեղից դուրս չգանք մինչ վերջնական որոշում կայացնենք, այլևս հնարավոր չէ այս լարված մթնոլորտում աշխատել, ում է ձեռնտու այս վիճակը, մեր բոլոր հորդորները հաշվի չեն առնվում, ընդունենք, որ նրանք լավ գիտնականներ են, լավ դասախոսներ են, բայց ինչքան կարելի է ոտնահարել մարդկանց իրավունքներն ու արժանապատվությունը: Ինչքան կարելի է հանդուրժել, որ ստահոտ լուրերով դաստիարակենք մեր ուսանողներին: Մեպտեմբերին մենք կիմանանք այս ամենի արդյունքը, երբ դիմորդների քանակը մեր բուհում կտրուկ կնվազի: Պարոն Խաչատրյանը նշեց, որ երբ ինքը գրուցում է ուսանողների հետ լսում է, թե ինչեր են ասում նրանք, որ լսել են պարոն Խորիկյանից կամ Համբարյանից: Պարոն Խաչատրյանը հարց բարձրացրեց, թե ինչքան են իրենք հանդուրժելու որ ոտնահարվի մի ողջ կուլեկտիվի արժանապատվություն:

Լ. Հակոբյանը նշեց, որ իր հայրը մի ամբողջ կյանք աշխատել է այս բուհում, ինքն էլ արդեն մոտ տասն տարի ամբիոն է ղեկավարել, այդ ընթացքում բուհում բազում խնդիրներ են եղել, որոնք նաև չեն լուծվել, սակայն նման տիպի խնդիր երբեք չի եղել: Տիկին Հակոբյանը նշեց, որ իրենք բոլորը իրենց աշխատանքն ենք կատարում, մեկը լավ, մյուսը մի փոքր պակաս, բայց այսպիսի անառողջ մթնոլորտում բոլորի աշխատանքը ջուրն է լցվում: Բուհում այդ երկուսի պատճառով անառողջ մթնոլորտ է ստեղծվել և ուսանողներն էլ հողվածներն են կարդում: Տիկին Հակոբյանը հարցականի տակ դրեց այն, որ սեպտեմբերին դիմորդներ կունենան, թե ոչ:

Ռեկտոր Ս. Մինասյանը նշեց, որ ինքը չէր ուզում հրապարակել, սակայն ստիպված է ցույց տալ ծնողներից մեկի իրեն հանձնած հաղորդագրությունը Խորիկյանի կողմից, որը հորդորում է ուսանողներին, որ դասի չգաք, դասադուլ է: Ծնողը խնդրել է չհրապարակել իր անունը, այդ պատճառով ինքը շատ զգույշ պատճենահանել է փաստաթուղթը, որ անունը չերևա: Ծնողն իր բողոքն է արտահայտել, թե ինչու են իր երեխային ներքաշում այս ամենի մեջ:

Ռեկտորը դիմելով պարոն Պողոսյանին հարցրեց,- իսկ դուք վստահ չեք, որ ուսանողներին պարոն Խորիկյանն ու Համբարյանը հորդորում են դասադուլ անել, անկեղծ ասե՛ք:

Բ. Պողոսյանը պատասխանեց, որ չի կարող ասել:

Լ. Ղուկասյանը ներկայացրեց, որ ուսանողները կարդում են գրառումները և իրենք վարկաբեկվում են, տպավորությունն այն է, որ իրեց սեփական շահի համար է այս ամենը, սակայն շահն էլ բացահայտորեն չեն ասում, ինչ են ուզում, ինքը կարծում է, որ բուհի աշխատակիցները պետք է առաջնորդվեն բուհի շահերով:

Ա. Չարչօղլյանը նշեց, որ ինքը որպես ուսանող վիրավորված է, որ քննության ժամանակ պարոն Խոբիկյանը իրեն ձայնագրել է, և ուղիղ հարցնում է բուհի ռեկտորին, ինչու է նման վերաբերմունք իր նկատմամբ ցուցաբերվում և եթե սա պիտի շարունակվի, ապա ինքը դուրս կգա և ուսխորհրդից, թե բուհից:

Ա. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ երբ ասում են, որ ուսանողներին հորդորում են, ուղղորդում են, այ՛ն, սա մեր բուհում ընդունված բան է եղել և դա էինքը զգացել է իր վրա, երբ հիվանդ էր, դեպրեսիայի մեջ էր, պարոն Պողոսյանի կողմից տրվեց մի գրություն, իբր իր դասախոսությունների փաթեթը չեն համապատասխանում տեստերին, ինքը խնդրել է ուսումնասիրել և գրավոր հիմնավորել: Տիկին Հովհաննիսյանը նշեց, որ առ այսօր պատասխան չի ստացել: Այդ օրերին, ուսանողներին հորդորեցին գնալ բողոքել, սակայն ուսանողների հետ հանդիպումից ինքը ամեն ինչ բացահայտել է: Տիկին Հովհաննիսյանը նշեց, որ այս ամենը երբեք չի բարձրաձայնել, որ բուհի անունը չվարկաբեկվի: Իսկ այսօրվա վիճակի համար մեղավոր են և՛ ռեկտորը, և՛ իրենք, քանի որ այսքան հանդուրժել են վարկաբեկողներին:

Լ. Խաչատրյանի կարծիքով այսօր բուհում ուսանողները բաժանված են երկու մասի, մի մասը ուշադրություն չի դարձնում բուհում տեղի ունեցող խնդիրներին և սովորում է, իսկ մյուսները շեղվում են և դասադուլ անում և իրեն թվում է, որ պիտի իրենց կողմից սաստվեն այդ ուսանողները:

Ռեկտոր Ս. Մինասյանը մի նկատառում ներկայացրեց, որ նոյեմբեր ամսին օրենքի տարրով յոթ ուսանողներ հրամանով հեռացվել են բուհից, ուսանողների ծնողների հետ անձամբ հանդիպել է ինքը և նրանք հասկացել են, որ հեռացումը իրենց երեխաների անբարեխիղճ վերաբերմունքի և չսովորելու պատճառով է եղել, սակայն հաջորդ օրը նույն ուսանողների անունից հրապարակվել է դիմում, որ ապօրինաբար խախտվել են ուսանողների իրավունքները և բուհը թշնամին է այդ ուսանողների: Պարոն Մինասյանը հիշեց, որ նույնիսկ մեկի հայրը եկել է համալսարան հայիոյել թե ով է իր կնոջ անունից կեղծ նամակ հրապարակել և ինքը դուրս է դուրս հրավիրել համալսարանից:

Ե. Սերոբյանը ներկայացրեց, որ հեռացված ուսանողներից մեկի մայրը խիստ զարմացել է, թե ով է իր փոխարեն նամակ գրել. որը հրապարակվել էր պարոն Համբարյանի սոցիալական ցանցի միջոցով: Պարոն Սերոբյանը նշեց, որ համենայնդեպս ամբողջ հանրապետության մոտ տպավորություն ստեղծվեց, որ մենք անօրեն ենք գործել:

Հ. Դրմեյանը նշեց, որ ինքը արդեն 49 տարի է, որ աշխատում է այս բուհում, սակայն անիմաստ է համարում խոսել այն մասին, թե իր հետ ինչպես են վարվել, իսկ ինչ վերաբերում է այսօրվա հարցին, ինքը համաձայն է որ ստեղծվի էթիկայի

հանձնաժողով, իսկ եթե գիտական խորհրդի անդամներն ունեն այլ առաջարկ, ներկայացնեն:

Սոցիալական գիտությունների դեկան Օֆելյա Հովհաննիսյանը նշեց, որ հինգ-վեց ամիսների ընթացքում ֆակուլտետում իրարահաջորդ և շարունակական դեպքերի պատճառով խաթարվել է աշխատանքային անդորրը: Տիրող լարվածության պատճառով սիրելի դարձած ֆակուլտետի առօրյան դարձել է հանրային քննարկման և շահարկումների առարկա:

Օֆելյա Հովհաննիսյանը նշեց, որ ֆակուլտետի ուսանող Ա, Չարչոլյանի քննություններն ամբիոնի վարիչի ԺՊ Հովհ. Խորիկյանի կողմից ձայնագրվել են:: Իրականում եղել է նման դեպք: Հավելվեց, որ նույն կուրսի ուսանողի, ով Ապրիլյան պատերազմի մասնակից է եղել և <<Մարտական խաչի>> շքանշանակիր, չեն ընդառաջել՝ չնշանակելով առաջին քննությունը, իսկ վերջինս էլ, հոգեբանական սատար չգտնելով, չի ամփոփել քննաշրջանը՝ ցանկանալով գործերը հետ վերցնել համալսարանից: Բայց չէ որ բոլորս էլ մանկավարժ-հոգեբաններ ենք, և գոնե այս պարագայում կարելի էր ընդառաջել: Մինչդեռ գիտխորհրդում ընդունվել է որոշում,, որով պետք էր ընդառաջել նման ուսանողների:

Դեկան Օֆելյա Հովհաննիսյանը նկատեց, որ ուսանողամետ և ուսանողակենտրոն գործունեություն տարփողելով՝ պատմության ամբիոնի վարիչի ԺՊ Հովհ. Խորիկյանը չի ստորագրում մանդատային հանձնաժողովի այն նիստի արձանագրությունը, որով ամրագրվել են այս կիսամյակում առկա համակարգում ուսանողների վարձավճարների զեղչերը: Բայց նույն ուսանողներին դրդելով՝ դարձրել էին դասադուլի ակամա մասնակիցներ՝ հարց բարձրացնելով նաև զեղչային համակարգի մասին:

Կամ՝ նույն ուսանողներին դարձնելով պահանջատերեր՝ չէին կարծում, որ վերջիններս անգամ սկսելու են պայքարել նաև իրենց ամբիոնի դասախոսների դեմ: Փաստն այն է, որ դասախոսի կողմից արված վրիպակի պատճառով ուսանողները դրսևորել էին ավելորդ պահանջկոտություն և ագրեսիվ վարք: Կարելի է արդյոք այս կերպ ազդել ուսանողի հոգեբանության վրա:

Օֆելյա Հովհաննիսյանը նշեց նաև, որ ֆակուլտետում տիրող լարվածությունն ազդելու է նաև դիմորդների ներգրավման վրա: Որպես փաստ՝ վերջին շրջանում ֆակուլտետի բաժիններից դիմորդների խուսափելը:

Ավելացվեց, որ դասադուլի օրերին չեն կարողացել պատասխանել ծնողների այն հարցին, թե այդ ամենը երբ է ավարտվելու: Ֆակուլտետի լարվածությունը գուցե նրանց կողմից դրսևորած անտարբերության արդյունք է և ինչու, մինչև երբ պիտի տեղի ունենա այս ամենը:

Ռեկտոր Ս. Մինասյանի դիտարկումով, ստացվում է, որ էլի ինքն է այս ամենի մեղավորը:

Թերզա Խաչատրյանը նշեց, որ մի փաստ է արձանագրում: Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի ուսանողներից տեղեկացել էն , որ պ. Համբարյանն իր դասերի տասը բոլորը հատկացնում է կոնկրետ նյութին՝ հետո խոսելով գրադարանից և ռեկտորից: Դասախոսը վարձատրվում է, ինչ իրավունք ունի դասին բամբասանքով զբաղվելու, և դա էթիկայի սահմանները դուրս է որքան կարող է շարունակվել: Ուստի կարևոր է էթիկայի հանձնաժողովի ձևավորվելը:

Ռեկտորը հավելեց, որ էթիկայի հանձնաժողովի կանոնագիրք չունենք, բայց այն ստեղծվում է տվյալ իրավիճակի համար:

Մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանի կարծիքով, կոլեկտիվը մեծ ընտանիք է, և տիրող իրավիճակն ազդում է բոլորի վրա, կռիվներն ազդում են բոլորի աշխատանքի վրա: Ինքը մտահոգ է, ձևավորվել է անվստահության մթնոլորտ, մարդիկ չեն վստահում իրար, և ոչ ոք չէր ուզում, որ այդպես լիներ: Սա հարցի մի կողմն է: Մյուս կողմն այն է, որ յուրաքանչյուր կոնֆլիկտ կոլեկտիվի համար շատ դրական նշանակություն պիտի ունենա, եթե կոնստրուկտիվ լուծում է տալիս, նպաստում է հետագա զարգացմանը: Սակայն ունենք այն, ինչը կա, և յուրաքանչյուրը պարտավոր է իր լուծումը տալու: Եվ արտահայտվողներից Հ. Դրմեյանը, Խաչատրյան Թերեզան, Հովհաննիսյան Անահիտն էլ առաջադրեցին այն լուծումը, որ պիտի դիմել էթիկայի հանձնաժողովին: Բոլոր տեղերում էլ այս դեպքերը կան, էթիկայի հանձնաժողով ստեղծելը անհրաժեշտ է, ինչպես Գյումրի բժշկական կենտրոնում էլ վերջերս: Կան հանձնաժողովի գործառույթները, կազմի թվաքանակը: Դիմելով ռեկտորին և սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկանին՝ Ռ. Մարդոյանը նշեց, որ իրենց ֆակուլտետում էլ եղել է դեպք, երբ ինքը ժամանակին է արձագանքել է՝ կանխելով հետագա զարգացումը: Գուցե ուշացել են այս խնդրի լուծման մեջ, պետք է միանձնյա որոշում կայացվեր, ինչպես ինքն էր այս պարագայում այդ հարցի լուծումն իր վրա վերցրել: Ապա նշվեց, որ կարելի է բողոքողներին էլ լսել:

Ռեկտորը պատասխանեց, որ մանկավարժության ֆակուլտետում կեղծ, շինծու օրակարգ չի եղել, այլ եղել է տղայական վեճ, որը վերաճել է ծեծկոտուքի, և մարդը պատժվել է այն բանի համար, ինչը թույլ էր տվել: Իսկ այս ֆակուլտետում իրավիճակն այլ էր:

Պ. Խորիկյանը գիտխորհրդի անդամ էր և պարտավոր էր գալ, բայց չի եկել: Ինքը նրանց հանդիպել է ընդամենը մեկ շաբաթ առաջ և առանձին հրավիրելու խնդիր չունի:

Հարց տալով տ. Մարդոյանին՝ ռեկտորը նշեց, թե համոզված է նա, որ դժգոհողների խնդիրն այն է, ինչի մասին գրում են: Ռ. Մարդոյանը պատասխանեց, որ իրականում այդպես չէ: Ռեկտորի հավելումով, նրանց նպատակը բուհը վարկաբեկելն է:

Խաչատրյան Թերեզայի փաստումով, ինքն ամեն անգամ սպասում էր, որ իբրև գաղափարի մարդ՝ պ. Խորիկյանը գալու էր գիտխորհրդին՝ նայելով բոլորի աչքերին:

Եղել է դեպք, երբ գրույցի ընթացքում Գ. Համբարյանը, միջանցքում աղմուկ է փորձել բարձրացնել՝ ցույց տալով, որ շոուի է ձգտում:

Միջոցակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ Շ. Տեր-Ադամյանի նկատումով, ստեղծված լարվածությունն ազդում է ուսումնական գործընթացի վրա և միգուցե խնդրի լուծման համար ուշացել ենք:

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան Թ. Մելիքյանի դիտարկումով, ինքը, վստահ լինելով իր հեղինակության վրա, խոսել է դժգոհողների հետ, և նրանք ասել են, որ չեն ընկրկելու:

Ռեկտորն ընդմիջելով հավելեց, որ այս ամենն դժգոհողների անձնական խնդիրները չեն. կգա ժամանակ, երբ ինքը կհրապարակի, թե ում խնդիրներն են, ոչ թե այդ երկու մարդկանց: Եվ ինչու է պ. Պողոսյանը շեղում օրակարգը, ինքը վիրավորված է նրա անկեղծությունից: Պ Պողոսյանը առաջիններց է եղել, ով որակավորում է տվել այս, իր բնորոշմամբ, ստոր քայլին:

Դեկան Թ. Մելիքյանը շարունակելով՝ նշեց, որ նրանք ասել են, որ պայքարելու են մինչև վերջ: Մեզանից յուրաքանչյուրը ճանապարհ է անցել, ընտանիք ունի, ինչու մենք պիտի կարդանք այդ լուտանքները: Այս վեճը հասել է այն աստիճան, որ վիրավորում են բոլորին՝ ԿԳ նախարարինին, վարչապետին: Ուսանողին ինչ է հետաքրքրում, թե ով է ընտրում ֆակուլտետի դեկանին՝ ֆակուլտետային խորհուրդը, թե գիտական խորհուրդը: Մասնակից են դարձրել այս գործին նաև ուսանողներին: Եվ մենք, ղեկավար մարմին լինելով, պարտավոր ենք որոշում ընդունելու, քանի որ ստիպված ենք եղել այսքան ժամանակ նրանց հանդուրժելու:

Դարձյալ ընդմիջելով՝ ռեկտորը նշեց, որ էլի սա վկայում է, որ նրանց նպատակը բուհը վարկաբեկելն է:

Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի ԺՊ Է. Մաթևոսյանը նշեց, որ բոլորին էլ հայտնի է իր անձնական վերաբերմունքն այդ երկու մարդկանց նկատմամբ հայտնի պատճառներով: Սակայն չանձնավորելով խնդիրը՝ ինքն առաջարկում է լսել ուսանողներին, և էթիկայի հանձնաժողովն էլ լսի դասախոսների կարծիքները:

Գործարարության և վարչարարության ամբիոնի ԺՊ Ա. Մկրտչյանի դիտարկումով, դասախոսների պահերի պաշտպանությամբ պիտի զբաղվի արհմիությունը:

Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի ԺՊ Կ, Սահակյանի կարծիքով, դժգոհողների վերաբերմունքը նորմալ չէ նաև իրենց ամբիոնի աշխատակիցների նկատմամբ: Գտնվելով նույն հարթակի վրա՝ լարվածությունն ազդում է նաև իրենց դասախոսների հոգեվիճակի վրա: Խախտվել է բուհական մշակույթը: Առաջարկվեց բուհում անցկացնել ծնողական ժողովներ, քանի որ, ինչպես փաստում է իրենց ֆակուլտետի դեկան ՕՖ. Հովհաննիսյանը,, դասադուլի օրերին շատ ծնողներ տեղյակ չեն եղել, թե որտեղ են իրենց երեխաները: Ուսանողներից շատերին չի էլ հետաքրքրում արդեն բողոքողների կարծիքները:

Ապա փաստեց, որ իրենք ուրիշի փոխարեն են ստորագրել, ինչպես Ղզրոյան Նարեկի՝ իբրև բողոքողի:

Պրոռեկտոր Ե. Սերոբյանը փաստեց պատմության բաժնի ուսանողների հետ ունեցած իր հանդիպման արդյունքները: հանդիպմանը ներկա են եղել դեկանը, լրագրողներ ր պ. Համբարյանը: Այդ հանդիպման ժամանակ արձանագրվել է մի տխուր փաստ, որ ուսանողները դրսևորել են ագրեսիվ վարք: Ցանկացած մեկնաբանություն կանխվել է մեկ ուրիշ հարցով: Ապշեցուցիչ է եղել այն, որ Գ, Համբարյանը, թուղթը թափահարելով, ասել է, թե գիտխորհուրդը հանցագործ որոշումներ է կայացրել: Ե. Սերոբյանի այն հարցին, թե ինչու է գիտխորհրդի անդամ Հովհ. Խորիկյանը կողմ է քվեարկել դրանց, Համբարյանը պատասխանել է, որ ճիշտ է արել, դիտմամբ է արել և մտածված, որպեսզի այսօր բարձրաձայնվեր: Միթե հոգացավ մարդու արարք է:

Ռեկտորը նշեց, որ այդպես էլ եղել է ուսումնական պլանների հարցում, որպեսզի ձախողվեր շահարկելու համար:

Պրոռեկտոր Ե. Սերոբյանի հավելումով, ինքը հարցրել է, թե ինչ են ուզում, հստակ ձևակերպելին իրենց պահանջները: Բայց մարդիկ չեն ներկայացնում հստակ պահանջներ՝ վիրավորելով մարդկանց, նախարարին անգամ անվանելով օյինբազ, մեզ՝ հանցագործ, զեղծարար, մեղսագործ:

Թ. Մելիքյանի կարծիքով, մեր համալսարանի նկատմամբ ձևավորվել է դրսում անլուրջ վերաբերմունք:

Ուսանողներից Քաջիկ Հարությունյանի կարծիքով, ինքը ձեռնպահ է մնում էթիկայի հանձնաժողով ստեղծելու հարցի վերաբերյալ: Առաջիններից է եղել, որ առաջարկել է ստեղծել նման հանձնաժողով, բայց այսօր կարծում է, որ այն ժամանակավրեպ է:

Ուսանողներից Լիլիթի կարծիքով, իրենք հասուն մարդիկ են և չի կարելի ծնողներին խառնել այդ գործին:

Ուսխորհրդի հախագահ Ա. Մելքոնյանի փաստարկումով, ինքը հացադուլի հենց երկրորդ օրն անցկացրել է ուսանողների ժողով՝ պահանջելով օբյեկտիվ

վերաբերմունք: Ուսանողների մեծ մասը չի էլ հետաքրքրվում այս ամենով, միայն մի փոքր խումբն է այդ հարցերով զբաղվում: Եթե դասադուլ են անում, հարկ է նրանց հետ այդ հարցը պարզաբանել: Ինքը նույնպես համաձայն չէ ծնողական ժողով անելու հարցին, որովհետև հասուն մարդիկ են:

Ռեկտորը հարց ուղղեց ուսխորհրդի նախագահին՝ ասելով, որ զեղչերի հետ կապված արհեստական խնդիրներ են բարձրացվել: Իրենք մեծ գումար են զեղչում, իսկ ուսանողները զեղչի հարց են բարձրացնում:

Գիտական քարտուղար Կ. Պետրոսյանը փաստեց, որ ինքը առնչվել է մի փաստի, երբ ուսանողներն ագրեսիվ են պահել իրենց՝ գռեհիկ կերպով պատասխանելով դասախոսին:

Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ Ա. Հայրապետյանի դիտարկումով, այս հարցի վերաբերյալ բոլորն էլ մեղավոր են՝ ռեկտորը, պրոռեկտորները, հոգաբարձուների խորհրդի նախագահը: Առաջին հերթին նրանց պետք էր լսել նրանց նույնիսկ սեպտեմբերի վերջին՝ պարզաբանում ստանալու, բացատրություն տալու:

Ռեկտորը նշեց, որ ինքը, ընդունում է իր մեղքը: Պարբերաբար հանդիպումներ է կազմակերպել նրանց հետ: Առաջին հրապարակումների հենց չորրորդ օրը պատմության վարիչը եկել է խոսելու՝ ասելով, որ մյուսը հետո կգա: Ռեկտորի հավելումով, ինքը չի տալու հանիրավի իրեն վիրավորել:

Դասախոս Լ. Հակոբյանի դիտարկումով, պ. Խորիկյանը, լինելով գիտխորհրդի անդամ, չի ներկայանում նիստերին:

Որակի կենտրոնի տնօրենի փաստումով, իր աշխատանքային գործընթացի շրջանում նկատվել է իր նկատմամբ անբարեհաճ վերաբերմունք՝ չունենալով անձնական խնդիրներ նրանց հետ: Սուբյեկտիվ վերաբերմունք է եղել իր գործի նկատմամբ: Սակայն չի կարող ընդունել բուհի հանդեպ այս վրաբերմունքը, որովհետև բուհը տարածաշրջանում մեծ նշանակություն ունի:

ՕՖ, Կուրազյանը նշեց, որ ինքը գիտխորհրդի անդամ չէ, սակայն չի կարող այսօր չխոսել, քանի որ մեր աշխատակիցների գրառումների արդյունքում և՛ բուհի հեղինակությունն է տուժել, և՛ դասախոսական կազմինը: Տիկին Կուրազյանը նշեց, որ համալսարանի լարված իրավիճակը ամբիոնների ծանրաբեռնված աշխատանքը դարձրել է կրկնակի ծանր և ֆիզիկական և հոգեկան առումով: Տիկին Կուրազյանը էթիկայի հանձնաժողով ստեղծելուն կողմ արտահայտվեց և նշեց, որ որպեսզի հաշվեհարդարից զերծ մնանք քննարկման ժամանակ հրավիրենք նաև մյուս կողմին, սակայն ռեկտոր Ս. Մինասյանը ուղղորդեց, որ դա հանձնաժողովի գործունեության սահմաններում է իրականացվելու:

Ս. Սարգսյանը նշեց, որ ռեկտորը հացադուլի օրը ընդառաջ գնաց իրենց հորդորին՝ հանդիպելով Խորհլյանի հետ: Թվում էր, թե այդ ամենին վերջ էր տրվելու, բայց այդպես չեղավ: Ինքը կողմ է էթիկայի հանձնաժողով ստեղծելու հետ: Առաջարկվեց, որ հանձնաժողովը որոշումը ներկայացնելուց առաջ հրապարակի մամուլում:

Ռեկտորը հավելեց, որ էթիկայի հանձնաժողովն իր որոշման եզրակացությունը տալու է ռեկտորին: Իսկ որոշումը գիտխորհուրդ չի գալու:

Ռեկտորը նշեց, որ ինքն այն տպավորությունն է ստանում, որ հերթական անգամ խոսելու և անցնելու ենք, բայց ինքը, պատասխանատու լինելով, հաշվի է առել բոլոր նկատառումները՝ հիմնավորելով այն:

1. Սեպտեմբերյան հայտնի նամակից առաջ շուրջ մեկ տարի ստացվել են անստորագիր նամակներ՝ նույն շարահյուսությամբ ու բովանդակությամբ՝ հաստատելով, որ ուղղված են նույն անձանց կողմից:

Հավելվեց, որ պ. Բ. Պողոսյանը տեսել է այդ նամակները: Իսկ վերջինիս փաստումով՝ ինքն էր մաշկի վրա զգացել:

Ռեկտոր Ս. Մինասյանը նշեց, որ երբ արդեն բարձրաձայնվել էին նամակներ գրողների անունները, երբ անվստահություն էր հայտնվել Հովհ. Խորհլյանին, Բ. Պողոսյանն այդ պատճառով էլ ձեռնպահ քվեարկեց: Ըստ քվեարկության՝ պ. Հովհ. Խորհլյանին անվստահություն էր հայտնելու ռեկտորը, բայց չի հայտնել: Ավելացվեց, որ սա պ. Հայրապետյանի հարցի պատասխանն էր:

Ռեկտոր Մինասյանը նշեց, որ անվստահություն չի հայտնել, որպեսզի բուհի վարկաբեկումը չերկարաձգվի, աշխատանքային նորմալ հարաբերություններ հաստատվեն(պ. Խորհլյանն էլ իր տղայի հասակին է): Հավելվեց, որ, ցավոք, օրակարգը կեղծ, մտացածին էր:

2. Ինքը հապաղել էր նաև այն պատճառով, որ երբեք չի կարելի ընդունել այն գաղափարը, որ դիմացինի հետ դիմացինի զենքերով պիտի պայքարել: Եթե նստածներից որևէ մեկը գտնում է, որ իր աշխատանքային շրջանում որևէ բան էապես չի փոխվել, սկսած նյութատեխնիկականից մինչև հոգեբանական մթնոլորտի ապահովում, հաստատ ինքն այստեղ չէր աշխատի, որովհետև արժանապատիվ մարդ է և արել է այն առավելագույնը՝ իր հնարավորությունների կեսի չափով, որովհետև անընդհատ հյուրեր է ընդունում, ինչը կարելի էր անել շուրջ մեկ տարի ու կես ձգվող անստորագիր ու ստորագրությամբ նամակագրությունից լարված նյարդային հոգեվիճակում:

Ռեկտորն ընդունում է իրեն ուղղված պարսավանքները և ասում, որ հաջորդիվ լինելու է հետևյալ քայլը. օրակարգի հարցերից է էթիկայի հանձնաժողովի

ձևավորումը և միանշանակ պիտի ընդունել՝ պահանջելով, որ այն անվատահոությունը, ֆինանսական կորուստները, վարկաբեկումը, վարկանիշի անկումը, ինչ կա ու մեղադրել են, որպեսզի էթիկայի հանձնաժողովի կողմից աշխատանքները երկարաձգելու, ընթացակարգ չլինելու, որևէ մեկի հրաժարական տալու դեպքում ինքը կորոշի՝ վերջ տալով հարցին: Իրենք էլ մուկ ու կատու չեն խաղալու: Քանզի այն դեպքում, երբ դեկաններ Ռ. Մարդոյանն ու Թ. Մելիքյանը արձակուրդ չէին գնալու, կամ Անահիտ Սերգեյնային հավաստիացվել էր, որ տեսքը առողջ է, հարկ չկա գնալ բուժվելու, որի իրավունքը չունեն, և այս բոլոր դեպքերում ուսումնական պլաններ էին ուղղվում, որոնք հետագայում ի լուր ամբողջ հանրապետության թափահարվելու էին:

Ռեկտորը շնորհակալություն հայտնեց անկեղծության համար՝ նշելով, որ կարելի էր ավելի անկեղծանալ, բայց մտավորական միջավայրի համար այն բավարար էր, որովհետև հակառակ դեպքում կվերածվեր բամբասանքի:

Հավելվեց, որ ինքը նկատողություն կտա, թե մեղալ, ինքն է որոշելու, կպատասխանի գրավոր, թե բանավոր, ինքն է որոշելու:

Հանդուրժել է անգամ ընտանեկան վիրավորանքները հանիրավի: <<Պարոնայք ընդդիմախոսների>> գործընկերները որոշ ժամանակ թուլացրել էին գրելը, բայց վերջիններս որպեսզի լարեն իրավիճակը, հրապարակային անձնական պիտակավորումներ սովեցին, որպեսզի ուշադրությունը ուղղվեր իր դեմ, քանզի նրանց հասցեին այս պարագայում առաջինն ինքն էր արձագանքելու: Թող էթիկայի հանձնաժողովը որոշի այդ հարցը: Ինքը կարող է ապացուցել, որ այդ հոդվածից տեղյակ չէ, բայց իրենք չեն կարող ապացուցել, որ իրեն ուղղորդված չեն մի շարք հոդվածներ:

Ճիշտ է ասված, որ էթիկայի հանձնաժողովը բարեկիրթ, նուրբ շեղումների համար է:

Տիկին Ֆարմանյանն այսօր ներկա չէ, բայց հորդորը՝ հարցը օրակարգից հանելու վերաբերյալ, տեղին չէ, որովհետև իրենք որոշում ունեն և անելու են: Ներողություն խնդրելով գիտխորհրդից՝ ռեկտորն ասաց, որ այսօրվա մեղադրանքները տեղին են և իրենք ընդունելու են էթիկայի հանձնաժողով: Ռեկտորը նշեց, որ իր հանդուրժողականությունն աշխատանքային գործընթացում վերագրվեց անպատասխանատվության: Եթե ինքը հանուն համալսարանի շահերի գնացել է հացադուլի մեջ գտնվող Հովի. Խորիկյանի մոտ, ապա դա եղել է նաև հանուն ուսանողների շահերի:

Թամարա Մելիքյանի հավելումով՝ ինքը՝ պ. Խորիկյանն է ցանկացել, որ ռեկտորը գնա իր մոտ՝ դրանից հետո ավելորդ բաներ գրելով:

Ռեկտոր Ս. Մինասյանն ավելացրեց, որ ընդունում է գիտխորհրդի առաջարկությունը: Բայց իր պատճառաբանությունը հետևյալն է. էթիկայի

հանձնաժողովի աշխատանքներն ընթացակարգ չունենալու պատճառով ձգձգվելով՝ կհասնեն մինչև ապրիլ, որպեսզի դիմորդ էլ չունենան ու փակվի այս հարցը՝ ձևակերպելով, որ Ս. Մինասյանն իր դեկանների և տեղակալների հետ այդ հարցը ձախողել է:

Որակի կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանը նշեց, որ էթիկայի հանձնաժողովն իր աշխատանքները կարող էր ձգձգել, եթե հարապարակումներով համացանցը հեղեղված չլիներ:

Ռեկտոր Ս. Մինասյանն ավելացրեց, որ ինչ հնչեց գիտխորհրդում, պետք արձանագրվի նույն տեքստով, ի տարբերություն անցյալ անգամ արված կոչի:

Ռեկտորը նշեց, որ ինքը արդեն կարդացել է կազմված որոշումը: Սակայն, որպեսզի հետագայում ինչ-ինչ պատճառներով (օրինակ ասենք հանձնաժողովի անդամի հրաժարվելը կամ ընթացակարգ չլինելը) խնդրի լուծումը չհետաձգվի, ինքը ձեռագրով ավելացրել է մի հատված, ըստ որի էթիկայի հանձնաժողովի աշխատանքների համար որպես ժամկետ սահմանվում է 10-օրյա աշխատանքային օր (երկշաբաթյա ժամկետում)՝ ելնելով գիտական խորհրդի նախապես ներկայացրած պահանջից:

Գիտական քարտուղար Կ. Պետրոսյանը ընթերցեց որոշման ձևակերպումը:

ՇՊՀ գիտական խորհուրդը, հիմք ընդունելով վերջին 5-6 ամիսների ընթացքում տեղի ունեցող իրադարձությունները՝ կապված բուհի անունը անհարկի շահարկելու, բուհը վարկաբեկելու, բարոյահոգեբանական մթնոլորտը խաթարելու, դասապրոցեսները կազմալուծելու, ամբողջ բուհում և հատկապես սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետում, պատմության ամբիոնում անառողջ մթնոլորտ ստեղծելու, ՇՊՀ գիտական խորհրդին վարկաբեկելու, ուսանողներին բարեվարքության սկզբունքին հակառակ դաստիարակելու հետ, ինչի պատճառով բուհը կրել և կրում է ֆինանսական և վարկանիշային կորուստներ, որոշում է դիմել ռեկտորին՝ ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր երկշաբաթյա ժամկետում խնդրին անհապաղ լուծում տալու համար:

Այն դրվեց քվեարկության

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Այնուհետև ռեկտորը անցավ հաջորդ հարցին, այն է էթիկայի հանձնաժողովի ձևավորմանը:

Նշեց, որ էթիկայի հանձնաժողովը ձևավորվելու է կոնկրետ դեպքի համար, միգուցե հետագայում, երբ մշակվի էթիկայի կանոնագիրք, ձևավորվի մշտական հանձնաժողով, ինչը նախընտրելի չէ, սակայն սա հետագայի քննարկման հարց է և դեռ կորոշվի:

Քանի որ Պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչ ԺՊ Հ. Խորիկյանի և դասախոս Գ. Համբարյանի պահվածքը վստահություն չի ներշնչում և

անհամատեղելի է դասախոսի աշխատանքին ՇՊՀ-ի գիտական խորհուրդը որոշում է ձևավորել էթիկայի հանձնաժողով բաղկացած 5 անձից: Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է կայացնել որոշում, որը կարող է հիմք հանդիսանալ ՇՊՀ-ի էթիկայի սկզբունքներով սահմանված կարգապահական տույժերի կիրառման համար:

Ա. Սարգսյանը հարցրեց, թե արդյոք փաստերի հավաքագրման խնդիր չի դրվելու:

Ռեկտորի կողմից տրվեց պարզաբանում, որ բնականաբար որոշումը փաստերի հիման վրա է լինելու, սակայն այդ փաստերն արդեն հավաքագրված են, մոտ 845 հրատարակված նյութ, որն հավաքագրված է և կտրամադրվի հանձնաժողովին:

Գիտխորհրդի անդամներից շատերը արտահայտեցին իրենց զարմանքը, որ այդքան նյութ է հրապարակվել նույնիսկ ռեֆլեքսի որակում տալով:

Ռեկտորը նշեց, որ ինքը անպայման կառաջադրեր պրոֆեսոր Ս. Սարգսյանի թեկնածությունը էթիկայի հանձնաժողովում ընդգրկվելու համար, սակայն, նկատի ունենալով նրա առաջիկա օրերին զբաղվածությունը, զերծ է մնում այդ առաջարկից: Այնուհետև հնարավորություն տվեց, որ գիտական խորհրդի անդամները ներկայացնեն էթիկայի հանձնաժողովի անդամների համար առաջարկություններ:

Թ. Խաչատրյանը առաջարկեց պրոֆեսոր Ա. Հովհաննիսյանի թեկնածությունը: Լ. Մարտիրոսյանն առաջարկեց Լ. Հակոբյանի թեկնածությունը: Լ. Ղուկասյանը առաջարկեց նաև Ե. Սերոբյանի և Վ. Խաչատրյանի թեկնածությունները, իսկ Կ. Պետրոսյանն առաջարկեց որպես ուսանող հանձնաժողովում ընդգրկել Ա. Չարչոլյանին:

Ռեկտորը ճշտեց այն հարցը, թե արդյոք ինքնաբացարկ հայտարարողներ կան թե՛ ոչ: Ինքնաբացարկ հայտարարողներ չեղան:

ՈւԳԸ նախագահ Ք. Հարությունյանը արտահայտվեց, որ դեմ է Ա. Չարչոլյանի թեկնածությանը՝ պատճառաբանելով, որ այդ ամբիոնից է և վիրավորված կեցվածքով է խոսել:

Որոշվեց առաջադրված թեկնածությունների համար առանձին-առանձին քվեարկել:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Ա. Հովհաննիսյան՝ կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ե. Սերոբյան՝ կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Վ. Խաչատրյան՝ կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Լ. Հակոբյան՝ կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ա. Չարչոլյան՝ կողմ՝ 25, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

Գիտխորհրդի անդամները և ներկա ամբիոնների վարիչները (նիստը ընդլայնված էր) ստորագրեցին կազմված որոշումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ՇՊՀ գիտական խորհուրդը, հիմք ընդունելով վերջին 5-6 ամիսների ընթացքում տեղի ունեցող իրադարձությունները՝ կապված բուհի անունը անհարկի շահարկելու, բուհը վարկաբեկելու, բարոյահոգեբանական մթնոլորտը խաթարելու,

դասապրոցեսները կազմալուծելու, ամբողջ բուհում և հատկապես սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետում, պատմության ամբիոնում անառողջ մթնոլորտ ստեղծելու, ՇՊՀ գիտական խորհրդին վարկաբեկելու, ուսանողների բարեվարքության սկզբունքին հակառակ դաստիարակելու հետ, ինչի պատճառով բուհը կրել և կրում է ֆինանսական և վարկանիշային կորուստներ, որոշում է դիմել ռեկտորին՝ ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր երկշաբաթյա ժամկետում խնդրին անհապաղ լուծում տալու համար:

II. Քանի որ ՇՊՀ-ի պատմության ամբիոնի վարիչի ԺՊ Հ. Խորիկյանի և դասախոս Գ.Համբարյանի պահվածքն այլևս վստահություն չեն ներշնչում և անհամատեղելի են դասախոսի աշխատանքին, ՇՊՀ-ի գիտական խորհուրդը որոշում է ձևավորել էթիկայի հանձնաժողով, բաղկացած 5 անձից՝ վերոնշյալ հարցը քննարկելու.

1. Խաչատրյան Վալերի Գրիգորի — Արհեստակցական կազմակերպության նախագահ

2. Սերոբյան Երվանդ Սերյոժի — Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր

3. Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր

4. Հակոբյան Լիզա Հելբերդի — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ

5. Չարչոլյան Արթուր Էդվարդի — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմության» բաժնի 2-րդ կուրսի ուսանող, ՈԻԽ նախագահի տեղակալ

III. Հանձնաժողովը տասը աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է կայացնելու որոշում, որը կարող է հիմք հանդիսանալ ՇՊՀ -ի՝ 2017թ-ի հունվարի 30-ին հաստատված «էթիկայի սկզբունքներ»-ով սահմանված կարգապահական տույժերի կիրառման համար:

IV. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հիմք՝ ՇՊՀ գիտական խորհրդի 12.02.2018թ-ի N 25.1 որոշումն ու 23.02.2018թ.-ի թիվ 26 գիտական խորհրդի արձանագրությունը / կից ներկայացվում է/:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

3. Մագիստրատուրայի և բակալավրիատի կրթական ծրագրերով սովորողների (առաջին կուրսերի) փոփոխված ուսումնական պլանների վերանայման մասին

Հաղ.՝ Ուսումնամեթոդական գործընթացի Պ կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ե. Սերոբյան**

Պրոռեկտոր Ե. Սերոբյանը ներկայացրեց բակալավրիատի կրթական ծրագրերով սովորողների (առաջին կուրսերի) ուսումնական պլաններում նախատեսվող փոփոխությունները, նշելով, որ դրանք պետք է անընդհատ վերանայվեն, որպեսզի ներկայացվեն գիտական խորհրդի քննարկմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Մշտադիտարկելով գործող մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները՝ վերանայել և ներկայացնել գիտական խորհուրդ՝ քննարկման:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

«Բարձրագույն կրթության ոլորտի օրենսդրական բարեփոխումներն ու հիմնախնդիրները» թեմայով խորհրդարանական լսումների իրագեկման մասին

Հաղ.՝ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ե. Սերոբյան**

Պրոռեկտոր Սերոբյանը ներկայացրեց, որ 21.02.18թ-ին Ազգային ժողովում մեկնարկել է գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի կողմից նախաձեռնած խորհրդարանական լսումներ՝ բարձրագույն կրթության մասին օրենքի նոր նախագծի թեմայով, որին հրավիրված էր նաև ինքը: Պարոն Սերոբյանը ներկայացրեց խորհրդարանական լսումների ժամանակ ԿԳ նախարարի և ազգային ժողովի մի շարք պատգամավորների կողմից բարձրացված հարցեր: Նա նշեց, որ ԿԳ նախարարի ներկայացմամբ բարձրագույն կրթության մասին նոր օրենքով արմատական եւ որակական փոփոխություններ են նախատեսվում: Պարոն Սերոբյանի ներկայացմամբ, նախարարը նկատեց, որ վտանգավոր իրավիճակ է մասնավորապես մասնագիտական կրթության և գիտության բնագավառներում: Ըստ նրա՝ բարձրագույն կրթության 70 տոկոսը հումանիտար մասնագիտություններ են, մնացած 30-ում էլ՝ գերակշռողը IT համակարգն է: Ստացվում է, որ գիտությունը առանձնապես ներկայացված չէ կրթական համակարգում՝ ոչ պետականում, ոչ էլ մասնավորում: Գիտության առջև ծառայած մյուս մարտահրավերը սերնդափոխությունն է, որի վրա կանգ առավ նախարարը՝ կատարելով վիճակագրական վերլուծություններ:

Այնուհետև պարոն Սերոբյանը նշեց, որ հաշվի առնելով ֆինանսական սուղ միջոցները՝ նախարարն այժմ անիրական է համարում հաշմանդամություն ունեցող անձանց բարձրագույն կրթություն ստանալու բոլոր խնդիրների լուծումը օրենքով: Նշում է, որ պահանջներ կարող են դրվել բուհերի առջև: Թե որ բուհը որքանով դրանք

կլուծի, կախված կլինի բուհի հնարավորություններից: Նախագծի վերաբերյալ ոչ միանշանակ է նաև ԱԺ փոխխոսնակ Միքայել Մելքումյանի կարծիքը: Ըստ նրա՝ բարձրագույն կրթության մասին օրենքի շուրջ քաղաքական հիմնական ուժերն ու հասարակությունը պետք է կոնսենսուս ունենան:

Պարոն Սերոբյանի ներկայացմամբ մի քանի ժամ տևած խորհրդարանական քննարկումը կոնսենսուս այդպես էլ չձևավորեց: Կառավարությունը բազմաթիվ մտահոգություններ լսեց: Թե դրանցից քանիսը հաշվի կառնի, պարզ կդառնա արդեն ԱԺ լիազումար նիկստերում նախագիծը քննարկելիս:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝

Համալսարանի ձեռնարկատիրական գործունեության ծավալման մասին (դահլիճին, հյուրատանը, ճաշարանին առնչվող գործունեություն)

Հաղ՝ ռեկտոր Ս. Մինասյան

Ռեկտոր Ս. Մինասյանը ներկայացրեց, որ թիվ 36 ռեկտորատի նիստին արդեն իսկ քննարկվել և ռեկտորատի անդամների կողմից հավանության է արժանացել համալսարանի դահլիճի, հյուրատան, ճաշարանի վերաբերյալ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հարցը, այն կձևակերպվի ու կներկայացվի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հավանություն տալ թիվ 36 ռեկտորատի որոշմանը (հարց 1-ին)՝ կապված համալսարանի դահլիճի, հյուրատան, ճաշարանի ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու վերաբերյալ, և հարցը ներկայացնել հոգաբարձուների խորհրդի քննարկմանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչության գրության հիման վրա ՇՊՀ-ի ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգում 2.9-րդ կետի վերանայման առաջարկի մասին

Հաղ՝ ռեկտոր Ս. Մինասյան

Ռեկտոր Ս. Մինասյանը ներկայացրեց, որ ՊՆ-ի կադրերի և ռազմական կրթության վարչությունից համալսարանին նամակ է ուղարկվել, որտեղ ասվում է, որ

2017թ.-ին համալսարանի ռազմական ամբիոնի պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված երեք մրցույթների արդյունքում դեռևս այն մնում է թափուր, այդ իսկ պատճառով առաջարկվում է համալսարանի գիտական խորհրդում վերանայել ամբիոնի կանոնակարգի 2.9-րդ կետը:

Հաշվի առնելով, որ զինատայողների շրջանում բավականին քիչ են գիտամանկավարժական աշխատանքային ստաժ ունեցող զինատայողները, խնդրում են քննարկել ռազմական ամբիոնի պետի կրկնակի մրցույթին մասնակցելու համար գիտական աստիճան, կոչում ինչպես նաև գիտամանկավարժական աշխատանքային ստաժ ունենալու պահանջի բացակայության ընդունումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաշվի առնելով ՀՀ Պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչության առաջարկը՝ ՇՊՀ ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգի (հաստատված 11.04.2017թ.) 2.9 կետում միայն ռազմական ամբիոնի պետի ընտրության դեպքում կատարել մասնակի փոփոխություն, այն է. կրկնակի մրցույթին կարող են մասնակցել գիտական աստիճան, կոչում և գիտամանկավարժական աշխատանքային ստաժ չունեցող անձինք (մրցույթը կազմակերպում և անցկացնում է ՊՆ-ն):

2. Կանոնակարգում փոփոխությունը հաստատելուց հետո այն տրամադրել ՀՀ Պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԼՍԵՑԻՆ՝

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

7.1 Աշխարհագրական գիտությունների թեկնածու, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանի «Էկոզոոսաշրջությունը Հայաստանում» մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին

Հաղ.՝ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր Ե. Սերոբյան

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով արտաքին գրախոսման դրական կարծիքները՝ աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանի

«Էկոլոգրոսաշրջությունը Հայաստանում» մենագրությունը երաշխավորել
տպագրության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

7.2 ԼՍԵՑԻՆ՝

**2017-2018 ուստարվա ավարտական քննություններից չատեստավորված ուսանողների՝
2018-2019 ուստարում ավարտական քննություններին մասնակցելու պայմանների մասին**

Հաղ.՝ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ
համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ե. Սերոբյան**

Պրոռեկտոր Սերոբյանը ներկայացրեց, որ 2017-2018 ուստարում ավարտական
քննություններից չատեստավորված ուսանողներ կան գրեթե բոլոր
ֆակուլտետներում, որոնց 2018-2019 ուստարում ավարտական քննություններին
մասնակցելու թույլատրման համար անհրաժեշտ է համապատասխան վճարման
կարգաչափ սահմանել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հանձնարարել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների
հետ համագործակցության կենտրոնին, ֆինանսատնտեսական վերլուծությունների
ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր
հաշվապահին, իրավաբանին, դուրս գալով վերոգրյալ նիստի արձանագրության
դրույթներից, ռեկտորատի հաստատմանը ներկայացնել վճարման կարգաչափը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ս. Մինասյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
Գիտական քաղաքականության և
արտաքին համագործակցության
կառավարման կենտրոնի
տնօրեն-պրոռեկտոր՝

Կ. Պետրոսյան

Ա. Ֆարմանյան

Ուսումնամեթոդական
 գործընթացի կառավարման և
 գործատուների հետ
 համագործակցության կենտրոնի
 տնօրեն-պրոռեկտոր՝
 Արհմիութենական
 կազմակերպության նախագահ՝
 Բնագիտամաթեմատիկական
 ֆակուլտետի դեկանի ԺՊ՝
 Ռազմական ամբիոնի պետի
 տեղակալ՝
 Ուսումնագիտական
 խորհրդատվական կենտրոն-
 գրադարանի տնօրեն՝
 Ֆինանսատնտեսական
 վերլուծությունների,
 ծրագրավորման և
 հաշվապահական հաշվառման
 բաժնի վարիչ-գլխավոր
 հաշվապահ՝
 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
 տեղեկատվական
 տեխնոլոգիաների ամբիոնի
 պրոֆեսոր
 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
 տեղեկատվական
 տեխնոլոգիաների ամբիոնի
 պրոֆեսոր
 Անգլերեն լեզվի և գրականության
 ամբիոնի պրոֆեսոր
 Հայոց լեզվի և գրականության
 ամբիոնի դոցենտ՝
 Մանկավարժության ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Պատմության և
 փիլիսոփայության ամբիոնի
 դոցենտ՝
 Ռուսաց լեզվի և գրականության
 ամբիոնի դոցենտ՝
 Միջմշակութային
 հաղորդակցության և
 զբոսաշրջության ամբիոնի
 ասիստենտ՝
 Մանկավարժության ամբիոնի
 դոցենտ՝

Ե. Սերոբյան

Վ. Խաչատրյան

Բ. Պողոսյան

Ե. Տոնոյան

Թ. Խաչատրյան

Ռ. Քալաջյան

Ս. Սարգսյան

Հ. Դրմեյան

Ա. Հովհաննիսյան

Ս. Հայրապետյան

Ռ. Մարդոյան

Հ. Խորիկյան

Թ. Մելիքյան

Շ. Տեր-Աղամյան

Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի
դոցենտ՝
Ռրակի ապահովման և
կառավարման կենտրոնի
տնօրեն՝
Աշխարհագրության,
կենսաբանության և քիմիայի
ամբիոնի դոցենտ՝
Նախագորակոչային և
ֆիզիկական պատրաստություն
IV կուրսի ուսանող՝

Լ. Հակոբյան

Ա. Սարգսյան

Լ. Մարտիրոսյան

Կ. Արամյան

Մանկավարժություն և մեթոդիկա
IV կուրսի ուսանող՝

Լ. Խաչատրյան

Անգլերեն լեզու և գրականություն
III կուրսի ուսանող՝
Կիրառական արվեստ III կուրսի
ուսանող՝
Մաթեմատիկա IV կուրսի
ուսանող՝
ՈւԳԸ նախագահ,
աշխարհագրություն I կուրսի
ուսանող (մագիստրատուրա)

Հ. Ավետիսյան

Ա. Մխիթարյան

Ն. Կոստանյան

Ք. Հարությունյան

ՈւՄ նախագահ, պատմություն II
կուրսի ուսանող
(մագիստրատուրա)՝
Պատմություն II կուրսի ուսանող
(հեռակա բակալավրիատ)

Ա. Մելքոնյան

Ա. Չարչոլյան

